

Թեամբ երկվարին դիմեց: Ամեն օգնութիւն մերժե-
լով՝ իւր Ծնօգրին ուն թուաւ, եւ ծառային պա-
տուեր տուաւ, որ եթէ Գաբարուհան այլ՝ ձին
յանձնէ եւ իւր ետեւէն գայ: Եւ եկած ծամբէն,
նորէն սուրբովով անցաւ գնաց:

Գաբարուհան ծամբայ ելաւ եւ կամայ կամայ
դէպ ի Բիգդի կը ձկնափարէ: Կերպարանքը գունա-
տած եւ զարճարեկ կատարութիւն մը կ'ուտեր
դէնքը: Այլ պիտի հետեւ բարկապաշտ Յուրիգային
առջեւ կէս-գրջացեալ ձեւացող՝ եւ բուրբային
զղջման գալու համար անոր ձեռքին հարկադրու-
թիւն չունէր. իւր Երազիրներն ի գերեւ ելած էին,
եւ առաջին վայրկեանն ուրիշ զգածուան չունէր,
բայց թթէ վրէժխնդրութեան անցողաց ծարաւ մը,
վրէժխնդրութիւն ամենուն դէմ, որոնք Յուրի-
գային այս որոշման մասնակցութիւն մ'ունէին:

(Հարսուսիւն:)

ՅԵՐԵՐԱՅԵԼԻ

ՆԱՐԱՆՈՒԹԵՔ

Նոր կտոր մը:

Վրանի մ'օր է որ Միւսիէն զարմանալի կտաք
մ'ամեն անցորդներու մտադրութիւնը կը գրաւէ:
Աօրկայ առանց ձիւ ինքնաշարժ կտաք մըն է, որուն
շարժիչը՝ կառքին ետեւի կողմէն հաստատուած մանր
կաթի մեքենայ մըն է, Գործածուած նիւթն ածուխ
չէ, այլ բնական գրուի (benzine) շառած չեղանիւթն:
Կառքին կարեւոր կազմ այս հեղանիւթն է կը հա-
նուի: Առաւելութիւնն այնմ է, որ թթէ շառ, թէ
միօրինակեալ եւ հանգիստ ընթացք մ'ունի այս
կտաքն, եւ ամբողջ վտանգու նիւթին ձախքն է,
մեկ ժամուան համար գրեթէ 20 կտաք. կամ 40
սանդիւն: Ամեն մարդ կրնայ գիրաւ կառավարել,
եւ մեկ ժամուան մէջ 16 քիլոմետր ճամբայ կ'ընէ:
Կեցքներնու համար կողմնակի ըծակ մ'ունի, որուն
ձեռքը ուզած ատեն կրնայ կեցուիլ: Երեք անիւ
ունի, որոնցմէ առջինն դէպի առջ կը ծառայէ: Ու-
զած ուղղութեամբ կրնայ գործուիլ կտաքը: Իսկ
զատի վեր ելլելու համար՝ մեծ արուեստով շինուած
կապան մ'ունի:

Զարմանալի ծաղիկ մը:

Մէքենիկոյ նոր ժամանակներու ծաղիկ մը
գտնուեցաւ՝ որ որուն ընթացքին մէջ երեք ան-
գամ գոյնը կը փոխէ: Առաւտըր ձերմակ կ'ըլլայ, կէ-
սարէն ետք կարմիր, եւ իրիկունը կապոյտ գոյն մը
կ'առնուի: Միայն կեսօրն անյշ կը հօտի:

ՏԵՏԵՍՍԿՈՒ

Ալպանանոս հուսիթի թոռնակորուհի:

Ալբերին բժշկական շաքարածեղներն թու-
նաւորապէս ընտանեաց դէպք մը կը պատմէ, որ մեծ
ուշադրութեան արժանի է: Վեց հօգի հակութի
ժերմութեց պատրաստուած անուշեղէն մ'ուտելով
թուանաբոցան: Հաւկթի գեղնուր կապոյտ գոյն մը
ետքը՝ անացած սպիտակուրը մաքուր գաւաթի մը

մէջ գործելով զով տեղ մը պահուած էր: Խնայող
սանաթիկինն ուժը որ ետքը ձերմակցն կ'առնուի եւ կը
սկսի զարնելով փրփուրներով: Փրփուրներն առնեն
տեսակ մ'անհամայ հոտ կը բուրբ հակկիթն եւ
չէր փրփուր, բայց սանաթիկինն քանի տեղ չդիւ-
ղով, վրան քանի մը նոր հակկիթ կ'առնայրէն եւ
առով ուտելիքն կը պատրաստէ: Ուտելէն 15 ժամ
ետքը սաստիկ ցաւ մը կը բռնէ բոլոր կերպիւրներն:
Չլաց սաստիկ սկսարութիւնն մը, սրտի ուժգին բա-
բարիւմ, սիրտ խառնուիլ, փսիւլ եւայլն կ'ըլլայ
հետեւութիւնն: Անմիջապէս բժշկաց օգուծեամբն
վտանգէ կ'ազատին, բայց հետեւութիւնը գրեթէ
շարժիթ մը գեւ. կը զգան: Այս թուանարման
նշաններն՝ ապականած ձուկ, միս, պանիր ուտելով
յառաջ եկած թուանարման հետ նոյն ըլլալուն,
հաստատուեցաւ որ ձերմակցի նիւթին ապականե-
լէն յառաջ կու գայ միշտ այս թոյնը:

ՄԵՆԵՐԱՆՈՒԹԵՔ

Արեգական եւ լուսնայ խաւարում յաիմ 1889:

Մ.առիկայ 1889ին երեք անգամ արեգական
եւ երկու անգամ լուսնայ խաւարում պիտի ըլլայ:
Արեգական առաջին խաւարումն բարբախտ է:
Խաւարումը կը սկսի Յունուար 1ին (նոր տամբը)
իրիկունը (երեքշաբթի) ժամը 7ը 50 անցած, եւ կը
վերջանայ 12ը 16 անցած: Խաւարումը տեսանելի
է միայն Հիւսիսային Ամերիկայ, (բայց ոչ հիւսի-
սային բեւեռին մօտ): Եւ խաղաղական Ովկիանոսի
հիւսիսային արեւելեան կողմը:

Առաջին խաւարումն լուսնայ մասնակուն է, եւ
պիտի ըլլայ Յունուար 17ին: Խաւարումը կը սկսի
առաւ առաւել 4ը 45 անցած եւ պիտի վերջանայ
7ը 41 անցած: Տեսանելի է արեւմտեան Եւրոպայ,
Աֆրիկէ եւ Ամերիկան:

Երկրորդ խաւարումն արեգական պիտի ըլլայ
Յունիս 28ին՝ մասեկանած: Բոլոր երկրիս վրայ կը
սկսի առաւ. 6ը 52 անցած, մասեկանած կ'ըլլայ
8ը շոր անցած, եւ կը վերջանայ բոլոր երկրիս վրայ
12ը 40 անցած: Աֆրիկայ տեսանելի է՝ Աֆրիկէի
հարաւային կէտն, հարաւային Արաբիա եւ Առա-
ջակողման Հնդկաստան՝ Սումատրա, Ջաւա եւ Պու-
նէյի հարաւագոյնն, Հնդկաց Ովկիանոս եւ Մեծ
Ովկիանոսի հարաւագոյնն:

Երկրորդ մասնական խաւարումն լուսնայ պիտի
ըլլայ Յունիս 12ին: Կը սկսի իրիկուն 8ը 29 անցած, եւ
կը վերջանայ ժամը 10ը 51 անցած: Տեսանելի
է Աւստրալիա, Աֆրիկէ, Աֆրիկայ հարաւային կէտն
եւ Եւրոպայ, ի բաց տեսալ քուրսովին հիւսիսա-
կողմն:

Երկրորդ բոլորական խաւարումն արեգական
պիտի ըլլայ Դեկտեմբեր 22ին: Երկրիս վրայ ընդ-
հանրապէս պիտի սկսի կէտքէն յառաջ 11ը 3 ան-
ցած եւ պիտի վերջանայ կէտքէն ետեւ 4ը 18 ան-
ցած: Բոլորականութիւնը կը սկսի կէտքը 12ին եւ
կէտքէն ետեւ 3ը 21 անցած կը սկսի բացուիլ:
Խաւարումը տեսանելի է հարաւային Ամերիկայի
Հիւսիսային կէտն, Աֆրիկէ՝ ի բաց տեսալ արեւե-
լեան հիւսիսակողմը, Արաբիա եւ Աւստրալիան Ով-
կիանոս:

Մեղսմանը պատճառները:

Նշուել թէ Գարգարիտա Գործ-Քան, որ Հիւսիսային Ամերիկայի Նախաւոր Հոգեհարստի-ներէն էր, Նիւ-Եորքի երաժշտութեան տկար-միայն մէջ անթիւ բազմաթիւ տղան խոտովա-նած բլլայ ճշմարտութեան սիրոյն համար՝ թէ յո-րում կը կայանար իւր սեղանահարստութեան զարա-նիքը: Ինչքան կը խոտովային որ այն զարմանալի ձա-ները յառաջ բերած է մեծ առնամատին առաջին յօգուածով: Ըստ բժիշկին, որոնք գննեցին այն փորձը, հաստատեցին այն մէկնաթիւնը:

ՔԱՂԱՔԱՔԱՆ ՏԵՍԱՐՔԱՐԻՆ

Նոյնմէր ամսին մէջ յիշատակաց արժանի քա-ղաքական գիտաւոր գէպըն է Գուլիելմո Գորմանիոյ կայսր ծառայութեանը պետութեան խորհրդանոցն բացած ժամանակ: Երիտասարդ կայսրն բացորոշ յայտ-նեց, թէ իւր դիտարկութիւնն է խաղաղութիւնը պահ-պանել, եւ թէ ինք այս նպատակաւ իւր մեծ ծանապա-րտողութիւններն ըրաւ եւ յորդորեց ըստ իշխաններն յայտ՝ իրեն գործակից ըլլալու:

Ինչոր ծառայութեանն ոգին կը բովանդակէ իրենման իտրին զգածում եւ աստուածապաշտութիւն, եւ այս կէտն գրեթէ իւր ամէն ծառայութեանն մէջ դիտարկն կը շնչէ ճանաչողի կայսրը, ցոյց տալու Նա-մար իւր ժողովրդան. թէ ինք կրնա ու աստուածապա-շտութիւն կը յարգէ եւ թէ ժողովրդն իւր աչէտը չէ անտարբեր ըլլալ կրնի մէջ:

Աւստրիոյ եւ Հունգարիոյ խորհրդանոցներն ամէն մի՞ն վեր բացուած են եւ ծանաղելու ինքիներով կը զարկին: Ի մէջ այլոց այս օրերս բանակցութեան նիւթ պիտի ըլլան զինուորական ինչ ինչ տուր կարգադրու-թիւններ, որոնցմով Աւստրիոյ-Հունգարիոյ զինուորա-կան զօրութիւնը պիտի տասնուի:

Նոյ. 15ին վախճանեցաւ Աւստրիոյ Նիլսարէթ կայսրուհին Նալթը՝ Մարտիրոսիան Դուքին Պալիւնա. որուն յուրապատկութեան միանակցեցան Փրանկիկոս Եղիզէի Աւստրիոյ կայսրն ճանդերն Ռուդոլֆոս Քաղա-ստանդաւ:

Գրեթէ այս տարւոյն սկզբանէ յարեալ Ամրիկէի գեղեցմանութիւնն ինքեան Եւրոպայի ազգաց մէջ: Անոր առաջին շարժանքը տուաւ Լիւնոս ԺԳ. Քանադա-պոլսն որ Քաղաքիկոյ նպակաւորաց գրած շրջանըա-կանովն եւ Եւրոպայի ազգերն յորդորելով, որ այս ան-գովթ է վայսրաց ստեղծութեան վերջ տրուի: Սոյն յոր-դորմանէ շարժեալ Ամրիկի մեծարարկութիւն կալիֆորնի կաղովնան սկսաւ զարմացալու Նալարն եւ ազատա-կանման ժողովն, որպէս զի արող սկիզբ ընէ գերեցաւ ազատութեան: Կալիֆորնի կաղովնանին անխնշ աշ-խատեցան յալող եւք ունեցաւ. միկիոն մ'աւելի ֆորմը Նալարուած է այս նպատակաւ, եւ բազմութիւն մ'ազատականներ կազմ՝ ու պատրաստ են արշաւելու այն երկրներն, ուր այս քաղաքատեղութիւնը դու կը սիրէ: Կալիֆորնի կաղովնանին գործունէութեան կեն-դրոնատեղին եղաւ Բեղզիոյ Պրիւլէն մայրաքաղաքը, ուր մեծ ընդունելութիւն գտաւ, եւ շատերը մեծամեծ գումարներ նուիրելով այս մարդասիրական վախճանին համար՝ Գրեթեց ազատութեան ընկերութեան անդամ գրուեցան: Ինչպէս որ լրագիրը կը ծանուցանեն, արդէն

Անգղիոյ ու Գորմանիոյ կառավարութիւններն իրենց գոր-ծակցութիւնն ու նպատակը խոտացած են այս մարդա-սիրական գործին, եւ կ'ըստի թէ Անգղիոյ կառավա-րութիւնն առաջարկել կ'ուզէ, որ համազգային ժողով մը զուգուրով՝ միասին գործարկութեան միջոցաց ու կերպին վրայ յորդորեցու Նամար: Սոյն նպատակաւ կ'աշխատի Նաւե Լիւնոս ԺԳ. Քանադապոլսն: Լե Mon-նո լրագիրն ալ կը ծանուցանէ, թէ Պրիւլէնը իշխանն կայսրն եւ իւր կողմին Ս. Տաւանապոլսին շնոր-հաւորութեան գիր գրած է. յորում կը գովէ Քանադապ-պետին այս մարդասիրական շնքն եւ Կալիֆորնի կար-գիւնալին անխնշ աշխատութիւնը, եւ կը յայտնէ եւս իւր համախոտութիւնը:

Կը յուսանք որ գերեցաւ ազատութեան այս Նա-մարական շարժումը ըստը Եւրոպայի մէջ իւր ազգե-րութիւնը կ'ունենայ, եւ յիշեցաւ ժամանակաց Նա-տ գնեւտ կը քարծուի այս քաղաքատական սովորութիւնը:

Գաղղիոյ կողմանկութեանց կռիւնները զգալաւոր կ'ազնն: Պատգամաւորը ինքուր ղէմ՝ մաքսատուածութիւններ կ'ընեն եւ չի գիտցուի թէ՛ արտոյ եւսն ինչ պիտի ըլլայ: Միւս կողմանէ պաշտօնեայր եւ հասարա-կականական կուսակցութեանց գլխաւոր իրենց կող-մանկեցները միութեան կը յորդորեն թաղաքատականաց եւ Պուլսնմովի կուսակցութեան ղէմ կուտուի Նամար, սակայն անգուր. որովհետեւ անկողին տաքսամիտու-թիւն մտած է կառավարութեան կուսակցաց մէջ, որ առանց արմատական վերաճողութեան չի կրնար դարմանուիլ:

Արմատականաց ալ չեն դաղորի կառավարու-թեան եւ կաթողիկէ եկեղեցւոյ մէջ հաստատուած գաշ-նաւորութեան վրայ յարձակում ընելէն. կը պահանջեն որ տէրութիւնն ու եկեղեցին իրարմէ՛ ըտրորովն անշա-տուին, եւ տէրութիւնն եկեղեցական վախճաններու համար ստակ չտայ: Բայց ինչպէս ցարդ անգուրաւ եղան Նոյն յարձակումները, այս անգամ եւս ի դերն եղաւ իրենց ջիգը. կառավարութեանց գունէ անշաղի խո-նէ՛ գտնուեցաւ բացալայս րոնելու, թէ ինչն ալ կ'ուզէ եկեղեցւոյ տէրութեան անշատուին, սակայն ցորչալի Նոյն դաշնաւորութիւնը չէ քարծուած, պէտք է ըստ այնմ գործել:

Սպանիոյ տէրութիւնը բաւական ժամանակէ ի վեր խաղաղ ու հանգիստ իւր երկրին ներքին քաղաքու-թեան կը նայէր, մանաւանդ Մարիամ Արքայուհի Քա-զուելոն ինտանկալութեան ժամանակ: Այս խաղաղ կա-ռավարութիւնն երկրին այնչափ զօրացուց եւ պետու-թեանց առեւ Սպանիոյ անուան յարգ այնչափ քաղ-քացուց, որ տարիէ մ'ի վեր Սպանիա գրեթէ առա-ջակարգ պետութեանց կարգը դաստնեցաւ եւ վնց պե-տութեանց միծայոյ միան ընդունեցաւ որ Սպանիոյ զեսակները Մեծ դեպտանի տիւրոսն կրնա: Սակայն այս հանդարտութիւնը քսնի Դ'սանտէ վեր սակաւիկ ինչ վերջովն է, որուն հետմտութեամբը հարկադրեցաւ Սա-կաղա պաշտօնէից զահմեղծուն կազմած պաշտօնա-րանը հրաժարել: Թէպէտ Նոյն պաշտօնեայն ուրիշ տուր պաշտօնեայն մ'արգէն կազմած է, սակայն թուի թէ երկուր կանար պիտի չունենայ. մանաւանդ երկ պաշ-տանողական կուսակցութիւնն իւր հակառակութիւնը շարունակելու միտեալ ըլլայ:

ՀՐԵՏԱՐԱՐԻ ԵՒ ՊՐԵՏԱՐԱՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐ

Հ. ԻՐԵՏԵԼԻ, Վ. ՊԵՐՐՈՆԶ

ՎԻԵՆՆԱ, ԻՐԻՐԵՆԵՆԱ ՑՐԱՐԱՆ (W. REINICH)